ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1.Հիմք ընդունելով «Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի 6-րդ մասը Ազգային Ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1) Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորների առնվազն մեկ քառորդի նախաձեռնությամբ 2021թ-ի ապրիլի 1-ին գումարված Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի արտահերթ նիստի օրակարգում ընդգրկված նախագծի երկրորդ ընթերցմամբ քննարկումը կազմակերպել առաջին ընթերցմամբ դրա ընդունումից հետո՝ 24 ժամյա ընթացքում:
2) Առաջին ընթերցմամբ ընդունված նախագծերի փաթեթի վերաբերյալ գրավոր առաջարկները, ինչպես նաև գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար սահմանել երեքական ժամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ՄԻՐԶՈՅԱՆ**

2021 թվական, ապրիլի ——